



ԻՄ ՀՈՒՇԵՐՍ ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ¹

1848 թվականն էր: Ես արդեն պատանեկական հասակիս 11-րդ տարին էի թևակոխել: Հորեղայրս՝ Ասհակ աղան, սկսած 1846 թվականից մինչև 1856 թվականը, քաղաքի ղեպուտատն էր և այս դիրքի ու հեղինակության պատճառով բավական մոտ անձնավորություն էր հաշատուր Աբովյանին, որն այդ թվականներին կառավարության կողմից ծրանի արքունի վարժարանի վրա տեսուշ էր նշանակվել: Հենց այդ թվականին էր, որ հորեղայրս ինձ հետը վերցրեց, մի փոքրիկ խուրչին կռնակա ձգեց և սարավ նոր նշանակված տեսլի մոտ: Մենք նրան հանդիպեցինք հենց վարժարանի առջևը շրջապայելիս: Աբովյանը տեսնելով հորեղորսը, մոտ եկավ և սիրալիր վերպով միմյանց ձեռք

1. Տպագրության հանձնելով հորս անձնական հիշողությունները իր ուսուցչի հաշատուր Աբովյանի մասին, կարեռ ենք համարում թուուցիկ ձևով այստեղ տալ Գևոնդ քահանա Աթանասյանի վերաբերյալ մի քանի կենսագրական տեղեկություններ:

Գևոնդ ավագ քահանա (աշխարհիկ անունը նահապետ) Աթանասյանը ծնվել է 1839 թվականի հոկտեմբեր ամսին, Երևանում, Աթանասյան քնտանիքում: Նահապետի հայրը եղել է արքունի թնդանութածիդ:

Հայրս, գեւան յոթ տարեկան հասակում, իր գրագիտությունը սկսում է տատի մոտ, ապա նրան տալիս են սովորելու Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցու բակում գտնված աշտարակեցի Տեր Սահակի վարժարանը: Բայց որովհետեւ այստեղ կիրառվելիս է եղել կոպիտ ուսուցչական և գաստիարակչական մեթոդ, Նահապետի հորեղայր Խոսհակը հանում է երեխային այս վարժարանից և տանում տեղավորում է հաշատուր Աբովյանի կողմից կառավարվող արքունի գցպրոցը Նահապետը Աբովյանի գպրոցում սովորում է մի քանի տարի և ավարտում:

Այսուհետեւ 80-ական թվականներին, Հայրս, ոգեստ և կոմիտացիան Հայրիկի հմայքով, Արևանձտանի միջնորդությամբ և ընկերակցությամբ, թողնում է հայրենի Երևանը և Պարսկաստանի վրայով անցնում վանակարգ, որտեղ ուսուցչական գործությունը կատարվում է առաջին ականավոր գրական-հասարակական գործությունը: Ահա այդ ժամանակ էլ ամուսնանում

սեղմեցին և ողջունեցին: Հորեղբայրս դառնալով տեսչին ասաց: «Երիստաֆոր Արտեմիչ, մեր այս փոքրիկ շարաձճին բերել եմ ձեր վարժարանը տալու: Կասկած չունեմ, որ ինչպես շատերի, նույնը և իմ այս եղբօր որդու վերա ձեր խնամքը և հովանավորությունը կատարածք: Եվ ես հույս ունեմ, որ իմ նահապետը լավ կտվորի, որով թիվ մեր հույսը և թիվ ձեր աշխատությունը իզուր չի կորչի»:

— Ի սրտե շնորհակալ եմ, Խայջ Անտոնիչ, — Հայտնեց Արովյանը, — որ դուք ինքնահոժար սիրով ցանկացել եք ձեր եղբօր որդուն բերել մեր վարժարանը: Զգիտե՞մ, ձեզ հայտնի՞ է թե չե, թե ես ինչ չարշարանքներ եմ մրում դաստիարակության այս գժվարին պայմաններում, չնայես որ ես շատ անգամ ստիպված եմ եղել կիրակի և տոն օրերին, յան Հայրիկին՝ աշխատակցելով նրա «Արծիկ Վասպուրականի» և «Արծիկ Տարոնո» շարաթաթերթին: 1865 թվականին նա Տարոնից վերադառնում է և հաստատվում հայրենի Երևան բաղարում:

Այսուղե նահապետ Աթանասյանին մենք տեսնում ենք Երևանի թեմական գպրոցի ուսուցչի պաշտոնով նրա աշակցությամբ են կազմակերպվում Երևանի առաջին օրիորդաց վարժարանը, առաջին մանկապարտեղը և առաջին ընթերցարան-գրադարանը:

Նահապետ Աթանասյանը սկսում է թղթակցել «Հյուսիսականի», «Կոռումկանի», «Մեղուաւին» և Գրիգոր Արծրունու «Մշականին» նա մոտ հարաբերության և թղթակցության մեջ է մտնում Միքայել Նալբանդյանի, Պերճ Պողյանի, Սերենցի, Գրիգոր Արծրունու, Արիսուղիմ և Արգար Հովհաննիսյանների, Գաբրիել Սոմոկանի, Գ. Զաշյանի, Պետրոս Սիմոնյանի, և որին Ստեփանենի և այլ ականավոր գրական-հասարակական գևմբերի հետ:

1877 թվականին Հրամվելով Թիֆլիս որպես տեսուչ Մարիամյան դպրոցի և ուսուցչի Ներսիսյան դպրոցի, մի քանի տարի անց, այն է՝ 1881 թվականին, Պերճ Պողյանի հետ, նա նորից վերադառնում է Երևան և կրկն սկսում իր մանկավարժական գործությունը: Ահա այդ ժամանակ էլ ամուսնանում

այս և այն եկեղեցին գնալ հորդոր կարդալ, որ տեղացիներն իրենց զավակներին անուսում չթողնեն: Քիչ շի պատահում, որ ուսման հասակի հասած որդիք ունեցող ծնողների ականջին փսխում եմ, թե քեզ տարենը մի հինգ ուրբաթ էլ նպաստ կտրվի, որ դու քո որդու համար՝ թուղթ, գրիչ, գիրք առնես և էդ ծանրությունն էլ դու շես քաշի: Եվ այսպիսով, ընթացաւ այս մի և կես ամսվան հազիվ հազ կարողացել եմ 85—95 աշակերտ ունենալ:

Այս բոլոր ժամանակը ես, գլխարկս վերցրած, կանգնած տեսչի և հորեղբորս միջև, պատանեկական մանրազնին հետաքրքրությամբ դիտում էի Արովյանին: Իմ տեսած Արովյանը նման չէր այժմյան լուսանկարիչների լուս ընծայած նկարներին. լավ հիշում եմ, նա ոչ շատ բարձր և ոչ ցած, ոչ գեր և ոչ լղար, այլ միջին հասակի բարեհեւ կազմվածքով, կը որ գլխով, բաց շագանակագույն մակերով, խիզախ դեմքով, գեղեցիկ 40—45 տարեկան անձնավորություն էր: Արովյանը ինքը մոտ քաշեց ինձ և կանգնեցրեց իր առջեր, ձախ ձեռքը իմ ձախ ուսին էր գրել, իսկ աջ ձեռքով շիկահեր գույքս էր շորում: Այս միջոցով նա մի առանձին բավականությամբ ասաց.

— Մի ուրախալի հանգամանք ինձ շատ մեծ հաճույք է պատճառել, որ քաղաքիս կարող անձինք, որոնք իրենց որդոցը Տըփդիսի գիմնազիոնը կամ Լազարյան ճեմարանն էին ուղարկում, իմանալով որ ես տեսչական պաշտոնով այսաեղ եմ մնալու, այդ մտադրությունները թողեցին... է որ ծախքերի ծանրությունից խուսափելու, չ որ Մոսկվայի դաժան սառնամանիքներին իրենց զավակներին զոհ չդարձնելու համար: Այսպես ես ստիպված պետք է լինեի, առնվազն, մի տարի ևս համբերելու: Եվ ապա դառնալով ինձ, ասաց. «Սիրելի նահապետ, քո գույքն էլ իմ գլխի պես մեծ է, ինձնից հազիվ վարեկ և մի բանի տարի անց ձեռնադրվում բահանաւ: Բայց բահանայությունից հետո էլ նա շարումնեկամ է զրադել դասավանդությամբ երեանի գիմնազիայում և ուսաքան ուսուցչական սեմինարիայում:

Վերշին 6 տարիներում (1914—1919 թ. թ.) հայրս երեանից տեղափոխվում է Թրիլիսի և մահանում 1919 թվականին 80-ամյա հասակում:

Հայրս իր հիշողությունները գրել է մահից մի բանի տարի առաջ: Այդ ժամանակում մի գործ է գետեղված 10 մեծածավալ տեսքերում:

Հորս ահա այդ հիշողությունները այժմ անհրաժեշտ ենք համարում հրատարակել մի փոքրիկ հատված Խաչատրու Արովյանի մասին:

Մահուագրությունները տրված են մեր կողմից:

ՊԱՐՈՒՅՐ ԱԹԱՆԱՍՅԱՆ

Ժապետ դուրս եկավ, տեսնենք թե քեզնից ինչ դուրս կգայ: Սրանից հետո հորեղբայրս ու Արովյանը միմյանց ձեռք սեղմեցին և բաժանվեցին:

Արովյանը ձեռքից բռնած ինձ տարավ իր առանձնասենյակը, խորչինից իմ գրերն ու տեսքակները հանեց, կարդալ տվեց և հետո տարավ նստեցրեց պատրաստական դասարանի երկրորդ բաժնում, և ապա դառնալով աշակերտներին ասաց. «Ես ձեզ մի նոր ընկեր եմ բրել, մի լավ ընկեր. Հույս ունեմ, որ դուք նրա հետ սիրով կվարվեք»: Դասերից վերջը երբ տուն գնացի, տատիս հայտնեցի՝ թե ինչ լավ է, որ ճաշից հետո է՛լ վարժարան շնեք գնալու (ծխական դպրությամբ, ուր առաջ սովորում էի, պարապմունքները մինչև երեկո էին տեսում), երբ երեկոյան հորեղբայրս տուն եկավ, ես նրան ասացի. «Հորեղբայրս տուն եկավ, ես նրան ասացի. «Հորեղբայր»ը, ինչո՞ւ երբ տեսուզը զբլիարկի ձեռքից առնելով ուզում էր գլուխս ծածկի, դու աշքով-նունով իշարաթ անելով՝ շէիր թողնում, որ ծածկիմ»: Հորեղբայրս ինձ պատասխան շտվեց. բայց երբ հայրս տուն եկավ, նա նրան մի առ մի պատմեց ինձ Արովյանի մոտ տանելը և վարժարան տալու և նրա հետ հոսածների և նրանից լսածների բոլոր պատմությունը, ինչպես և գլխարկս վերցնելու և ձեռքում պահելու մասին: Պարզվեց, որ գլխարկ վերցնելն ունի իր պատմությունը, որը հետեւալն է.

Խ. Արովյանը, որ շատ ինքնասեր անձնավորություն էր, շէր սիրում շուտ-շուտ բազար դուրս գալ և իրան հեռու էր պահում բազարից: Բայց թե ինչպես է պատահում, մի օր, բազար է գնում և ուզենում է անցնել մեր բազազների³ շարսովց⁴, նկատում է, որ իրանից 15—20 քայլ հեռավորության վրա, իր սոզեից, անցնում է ոստիկանական թաղասետը: Արովյանը նկատում է՝ թե ինչպես շաբսուի վաճառականներն աջ և ձախ ուղարկում են կանգնում և խոնարհաբար ողջունում, իսկ իրեն հանդիպած ժամանակ անտարբեր և սառը վերաբերում:

Հորեղբայրս նույն շաբսիում սառափի նախնութ ուներ: Արովյանը այլայլված դեմքով վերադառնում է շաբսուի գլխից հորեղբայրս խանութը և խնդրում, որ անմիշապես բոլոր վաճառականներին իր մոտ կանչի: Եվ երբ նրանք գալիս են, Արովյանը քաղաքավարու-

2. «Իշարաթ անել»— նշան անել, նշան տալ:

3. «Բազար»— նպարավաճառ, չոր միքր վաճառող:

4. «Զարսուա»— հին երևանի ծածկված, երկար շարուլ ձգված հայ և թուրքական վաճառառները:

5. «Աթարվա»— հին երևանում կային անձեր, որոնք զարգլում էին դրամներ փոխանակելու գործով կամ մահրացնելու— որոց շահագիտական մի ձև:

թյամբ ողջունելուց հետո, ասում է. «Պարոն-ներ, ձեզ հավատացնում եմ, որ ես մի առանձին փառասիրություն չունեմ և չեմ էլ ունեցել անցյալներամ, թեպետև ճշմարտությունը խոստովանելով պետք է ասել, որ այդ կիրքն ամեն մարդու մեջ էլ կա, թե՛ ուսյալ լին նա և թե՛ անու. բայց ես այնուամենայիշ ամեն կերպ աշխատել եմ ինձ միշտ հետու պահել նրանից, վասնզի ասված է. «Փառքը ստվերի է նմանվում—եթե նրանից փախչե՞ ետևիցդ կզա, իսկ եթե նրա հետակց ընկնես, նա քեզնից կփախչի»; Եվ ուգիմն ասեմ ձեզ. այս շարսուով մի քանի րոպե առաջ գնում էր մի քանի քայլ ինձանից առաջ պուիցիական աստիճանավորը. տեսա թե ինչպես դուք ամենքդ ոտքի էիք կանգնում, գլխարկ վերցրած գլուխ էիք տալիս, իսկ երբ ես նրանից քիչ հետո անցա, ձեզանից շատերը անտարբեր, հազիվ էիք տեղնքից բարձրանում, գլուխ տալիս, կարծեք, թե այդ էլ մի տեսակ ավելորդ էիք համարում... Բայց եթե դուք մի րոպե մտածեք թե ո՛վ է պուիցիական աստիճանավորը և ո՛վ եմ ես, հավատացած եմ, որ դուք ինքներդ ձեզ կդատապարտեք ձեր անքաղաքավարի վարժանց համար... Այս՝ պուիցիական աստիճանավորը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն, որ նա պետք է հազի փողոցների մաքրության վերա, և եթե սամկած շուն կամ կատու ընկած լինի, նա պետք է իր ստիլիզանին պատվիրի, որ ժամ առաջ սայլ վարձեն և տանեն քաղաքից դուրս հողի տակով անեն... Բայց դուք քիչ անդամ տեսած շեք, որ օրերով այդ պականությունները ընկած են լինում փողոցներում, սաստիկ գարշահոտություն են տարածում, որը կարող է վարակիչ հիվանդությունների պատճառ լինել: Նոքա այդ մասին էլ անփոյթ ու անհոգ են մնում, բայց այնուամենայնիվ դուք նրանց պատվում եք մեծարում եք... իսկ ձեր որդոց, ձեր զավակների ուսման և առաջադիմության մասին մտածող և հոգացողներին՝ ուսուցիչներին և դաստիարակներին պատվել հարգելուց ձեզ հետու եք պահում... Ահա՝ հենց այս ուղեցա ասել ձեզ և ուրիշ ոչինչ... ազատ ե՛ք, գնացե՛ք...»:

Այս ասելուց հետո Արովյանը տեղից վեր է, կհոնում ու հեռանում. և մեր բազագիւնի բազագիւրը ամոթից մինչև ականչների կոթը կարմրած, թողնում գնում են:

Այս անցքից հետո՝ Արովյանին մի որևէ տեղ տեսնողները, թե՛ մեր շարսուի բազագիւրը և թե՛ ընդհանրապես այս հանգամանքին տեղյակ անձինք աճապարում գլխարկ էին վերցնում և խորին խոնարհությամբ գլուխ էին տալիս, ողջունում, նա էլ, իհարկե, իր հերթին, փոխադարձարար բարեւում էր բոլորին:

Որքան կարողացել եմ մտքիս մեջ պահել, արքունի վարժարանում թե՛ ոռաաց լեզվի և թե՛ թվաբանության առարկան ինքն Արովյանն էր պարապում. բայց զգիտեմ, Գրութելի թվաբանական մեթոդը ծանոթ էր նրան թե չե, բայց և այնպես նա իր հետ դասարան էր բերում Քանաքեռից «լուսա ասված ընկույզներ, որոնք թիւկ փոքր, բայց համեմատար բավական ծանր էին և գործադրության շատ հարմար: Եվ, այսպես, Արովյանը դառնում էր դեպի մեզ, ասում. «Ապա՛ ինձ ասա՛, Պողոս և կամ թագեռն'ս, որ եթե այսքան ընկույզ ձեռքիդ անենաս և ես այսքան էլ ավելացնեմ քո ունեցածի վերա, որու որքան կունենաս ձեռքում: Եվ կամ թե՛ այսքան ընկույզիցը վերցնենք հանենք, դու ձեռքում դիմումը ինչպահ ընկույզ կունենաս»: Նույն կերպով էլ պարապում էր բազմապատկումն և բաժանումը:

Լավ չեմ մտաբերուած թե ինչո՞ւ և ի՞նչ հարցերին ես կարողացել էի լավ և պատշաճին պատասխան տալ, բացարեկ, և աճադասերից վերջը, նա վերցրեց ինձ և իմ ընկերակիցներին ու տարավ բազար, բազագների իսանութը, իր ձեռքով խուրցիններիս մի թայը դատարկեց մինի մեզ, իսկ այն դատարկ թայի մեզ չոր միրու առավ լցրեց և ասաց իմ ընկերակիցներին.

— Եթե դուք էյ նահապետի պես պատասխանեք, ձեզ համար էլ միրու կառնեմ:

Այդ նույն ժամանակ ինձ առանձնացնելով ականչիս ասաց.

— Հենց որ ես կերթամ, քո ընկերներին էլ բաժին տուր, մեղք են:

Եվ այդ պահուն ես ինձ այնպիսի երանության մեջ էի զգում, որով ոգևորված այնպես առատածենությամբ բուռ-ֆուռ բաժանեցի ընկերներիս, որ իմ բաժինս նրանցից ավելի քիչ եղավ: Մյուս օրը տեսուազը իմ բացակայության ժամանակը հետաքրքրվել էր իմանալու թե ես նրա պատվերը կատարե՞լ եմ, ընկերներիս բաժինն ավելի եմ, թե ոչ: Եվ երբ նրանք հայտնել էին՝ թե ես իսկապես նրանց այնքան շատ տվեցի, որ ինձ նույնիսկ շատ քիչ մնաց, այս հանգամանքը իմ վարքը շատ էր բարձրացրել Արովյանի աշրում, դրամից հետո նա սկսեց ավելի շատ սիրել ու գորդուրել ինձ:

Զմուռանամ ասել, որ մեր տանը հաճախող բարեկամներն ու ծանոթները, երբ պետք էր լինում Արովյանի մասին խոսելու, ընդհանրապես մեծ գովեստով էին խոսում նրա ուսուցչական պաշտոնավարության և տեսաշական գործունեության մասին. թե ինչպես նրա շնորհիւ արքունի վարժարանը օրավուր սկսել էր ծաղկել, օրավուր առաջադիմա-

կան ճանապարհի վրա էր դրված նրա հիմքը, որ Արովյանը շբավականանալով մինչև 1—2-ը, ճաշից հետո, ժամը 5-ից, նորից իր մոտ էր ժողովում երկրորդ և երրորդ դասարանների աշակերտներին և նրանց հետ գերմանակեն պարապում: Ասում էին նմանապես՝ Վեհափառ Ներսես կաթողիկոսը, իրեն թե Արովյանին խոսք է տվել, որ նրա ձեռնասում աշակերտներից ավելի ընդունակներին էջմիածնի ժամփով արտասահման—Գերմանիա է ուղարկելու, որ այնտեղ հիմնավոր ուսում սուանան և վերաբառնան, գան մեր կողմերում ուսուցչությամբ պարապեն:

Սառափ Մկրտիչը (իմ մորեղբայրը), որը բավականին հին հասկացողության տեր էր և իր ժամանակի ազգեցիկ մարդկանցից մեկը, լսելով Արովյանի մասին գովասանական խոսքեր, մի անգամ ջղայնացած ասաց. «Դուք ինչքան կամենում եք գովեցեք Արովյանին, «փառաց փեթակը» հասցեք, ես նրա մի վարմութքը իսկի շեմ հավանում: Այս ինչպես հավանեմ. մի էլ էն ես տեսնում, որ հրես վարժարանի աշակերտներին զիմին ժողովեց, զիմվորների պես շարքերով կանգնեցրեց, առաջ արեց, տարավ թալարի բաղը⁶, Սարդարի աբդին: Դե հիմի էստեղ աշքը բարին տեսնի—տեսնում ես, որ ամեն աշակերտի զրապանից հրես մի-մի նախշուն բրդից շինած թոփ է, որ դուքս է զալիս, սկսում է թոփակովիք աշակերտների մեջ, հնառո՞ւ աթքըմեն՝, հետո աշքավագուկ և դրանց պակասն էլ ինքը տեսուն է լրացնում, զանազան նոր խաղեր, նոր թոփշներ սովորեցնում»:

Հայրիս, որ ընդհանրապես բամբասանքից միշտ խուսափող մարդ էր, սկսեց Արովյանի օգտին խոսել և դառնալով գեղի սառափ Մկրտիչը, ասաց. «Ուսիդղն ասեմ, ես էլ առաջ քո կարծիքին. էի, բայց բարերախտաբար անցյալ շարթին գործով բերդը զնդապետ Վորոբիովի մոտն էի գնացել: Այն՝ ինչ որ մի բանի բոպե առաջ դու ասացիր, նույնը ես զնդապետին հաւտնեցի: Եվ նա ինձ ասաց. «Շատ սխալվում եք, Գրիգորի Անտոնիւ, որ Արովյանին դատապարտում եք այն բանի մասին, որ դովասանքի է արժանի: Նա դրանով կամենում էր նոր կյանք մտցնել երե-

խաների մեջ, թարմ արյուն հոսեցնել նրանց երակներում»: Հետո գնդապետը մի առանձին ոգևորությամբ, զվարթացած, վեր թռավ տեղից և գեմառողիմ կանգնելով, ասաց. «Դիտե՞ք, Գրիգոր Անտոնի՛ և այդ ձեր Արովյանը մեր ոռաների մասին լավ կարծիք ունի: Նա այս օրերս մեր կոմենդանուին առաջ է, թե ուսւ ազգը և ուսւաց կայսերական կառավարությունը նախախնամությունից սահմանած աշխարհ է եկել, որ երկրագնդին վերա եղած բոլոր քրիստոնյա ժողովուրդներին, որոնք դարձերից ի վեր հեծում են բրոնությունների տակ, բոլորին էլ ազատի»:

Եվ, այսպիսով, ավելացրեց հայրս, գնդապետ Վորոբիովը, կարծիք թե լիովի բավարարված Արովյանի անկեղծ զգացմունքով արտահայտված տեհանքներից, դարձավ ինձ և ասաց. «Բայց դուք հայերդ գիտե՞ք թե ո՞վ է Արովյանը. նա Դորպատի համալսարանը ավարտած, բարձրագույն ուսում ստացած մարդ է և միաժամանակ լավ մանկավարժ, բառի իմական իմաստով. ուրեմն դուք ոչ միայն որևէ ատիթով նրանից դժգոհ, այլ ընդհակառակը, պետք է Աստծուց շնորհակալ լինեք և գո՞յ, որ ձեզ այդպիսի պատրաստված ուսուցիչ և դաստիարակ է պարզեցի:

Ահա այսօրինակ գովեստներ էինք լսում թե՝ մեր ծնողներից և թե՝ մեր շրջապատողներից, մանավանդ թե՝ ալելի էլ գովեստի արժանի վերաբերմունք էինք տեսնում մեր անմոռանալի տեսչից, երբ մի շարաբախտ օր, զնում ենք արքունի վարժարանը և ի՞նչ ենք տեսնում՝ տիսուր և թախծալի գեմքեր, այս և այն կողմ փսխուր, ծածկախոսություններ, հառաջք, նույնիսկ լաց, և իմանում ենք թե մեր անգնահատելի ուսուցիչը, մեր բարի և պատվական տեսուչը դիշերը տնից դուքս է գնացել և այլևս չի վերադաբել...

Վայնասո՞ն, լացուկոծը սկսում է աշակերտներիս մեջ, մեզ գրեթե բռնի տուն են ուղարկում. երեք օր ընդհատվում է ուսումը, և մենք միայն այն իմացանք, թե՝ մեր անմոռանալի տեսուչը սաստիկ վշտացած տնից դուքս է նկել և օգտվելով Զանգու գետի գարնան օրերում վարարած, կատաղի գրությունից, իր փրկությունն ու հանգիստը նրա կոհակների մեջ է փնտրել, որը աճապարանով պետք է նրա խնկելի դին տաներ և Մալր Արաքսի գիրկը ձգեր:

6. «Թալարի բաղը»— զա նույնն է ինչ և Սարդարի պարագի շահնի կողմից երևանի կասավարչի անունը՝ ալգին, որը գանգում է Զանգու գետի աշ ափի վրա:

7. «Աթքըմա»— պատանեկական խալ, որի միջոցին մեկը կողմ է, իսկ ուրիշները նրա վրայից ոստնում են:

Անցան այս օրից ավելի քան հիսուն երկար ու ծիգ տարիները. լավ շեմ հիշում թե ինչպե՞ս և ինչտեղի՞ց ձեռքս ընկավ մի շատ սիրում և պատշաճին բանահյուսություն, որից մի օրինակը տվի անցյալ տարի մեր հայ անդրիագործ պարոն Անդրեաս Տեր-Մարտիրյանին⁸, իսկ ահա մի օրինակը զետեղում եմ այստեղ, որպես վերջաբան այս երկտող հուշերիս.

8. Խաչատուր Արովյանի արձանի ստեղծագործողը, որն ստացել էր մասնագիտական արվեստը Ֆրանսիայում, երեանցի էր և ապրում էր Փարիզում, որտեղ և մեծ կարիքի մեջ լինելով՝ վախճանվում է և թաղվում այնտեղ:

«Գերեզմանդ կորած,
Աշքից հեռացած,
Մտքից մոռացած,
Աշխարհը անլեզու,
Մարդիկը անիրավ,
Հեշ շնարցրին,
Թե խեղճ Արովյան
Ուր գնաց կորավ...
Ոչ սուրբ հիշատակդ
Մրուից կորուցինք,
Եվ ոչ էլ քարե
Արձան վրեդ կանգնեցինք»⁹,

9. Տեղեկություններ կան, որ այս ստանավորի ժեղնակը Միքայել Նալբանդյանն է; — այսպես էր պնդում Հայրու Համենային դեպս, ով էլ որ լինի այս ստանավորի հեղինակը, որ արդարացի քննադատության է ենթարկել իր ժամանակում գոյություն ունեցող անտարքերությունը Արովյանի նկատմամբ, մորով չի անցել, որ Արովյանի մեծարողը և արժեքավորողը լինելու է մեր եկող նոր սերունդը:

